

ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵԶՐՈՒԹԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԸՍՏ «ԳՈՒՄ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ

Միքայելյան Կարինե

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
karinemiqayelyan1963@gmail.com
<https://orcid.org/0000-0001-7445-4003>*

Ամփոփում

Համառոտ ներածական: Արդի արևելահայերենի եզրութային բառաշերտի ուսուցման հիմնահարցերը բուհական կրթության առաջնահերթություններից են: Մասնագիտական առարկաների ուսուցումն առավել արդյունավետ և նպատակային է դառնում նախ և առաջ եզրութային բառաշերտի յուրացման շնորհիվ: Ուստի ոչ միայն մասնագիտական առարկաների, այլև հայերեն դասավանդողների համար ըստ մասնագիտացումների եզրութային բառաշերտի ուսուցման մեթոդաբանության հիմնահարցերը, մասնավորապես դրանց արդյունավետ մատուցման եղանակների ընտրությունը, դեռևս մնում են խնդրահարույց:

Բանալի բառեր՝ *եզրությունների ուսուցում, ԳՈՒՄ ուսուցման մեթոդ, գրաբարի եզրութային բառաշերտ, արդի արևելահայերենի եզրութային բառաշերտ, իմաստավորություն, եզրութացում, եզրութային նորաբանություններ:*

Հիմնախնդիրը

Արդի արևելահայերենի գրեթե բոլոր գիտաճյուղերի եզրութային՝ բառաշերտերի համար գրաբարյան բառապաշարը հիմնական աղբյուրներից է: Իհարկե, դարերի ընթացքում ներքին փոխառության ճանապարհով հնդեվրոպական բառապաշարի մի մասն անցել է վաղնջահայերենին, հնագույն, հին հայերենին, այնուհետև գրաբարյան բառաշերտին: Հնագույն փոխառությունների շնորհիվ գրաբարյան եզրութային բառապաշարը հարստացել է, փոխանցվել միջին հայերենին, բառիմաստների փոփոխության հետևանքով դրանց մի մասն էլ եզրութացել է նաև արևելահայերենում: Այս առումով եզրությունների բուհական ուսուցումը առավել նպատակահարմար ենք համարում ստուգաբանական, ծագումնաբանական, բառակազմական, իմաստաբանական զուգընթաց քննությամբ մատուցել: Այս խնդիրը լավագույնս լուծելի է ԳՈՒՄ ժամանակակից մեթոդի կիրառմամբ:

* Կարծում ենք՝ տերմինային հոմանիշությունից խուսափելու համար **գիտաբառեր** կարելի է համարել գիտության լեզվում առավել հաճախ կիրառվող հասկացական բառերն ու բառակապակցությունները, իսկ **եզրություններ**՝ մասնագիտական ստույգ հասկացությունների անվանումները: Դրանց սահմանազատումը երբեմն այնքան էլ հստակ չէ, ուստի հոդվածում մենք դրանք քննել ենք չտարանջատված:

Հոդվածի թեմայի **արդիականությունը** պայմանավորված է բուհական կրթության ոլորտում ըստ մասնագիտացումների եզրութային բառապաշարի ուսուցման արդյունավետ մեթոդների մշակման, մատուցման նպատակահարմար ուղիների որոնման անհրաժեշտությամբ:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների հակիրճ վերլուծություն: Գիտական գրավոր և բանավոր խոսքի մշակույթի, մասնավորապես եզրութաբանության, ուսուցմանը մեծապես նպաստում են այդ հիմնախնդիրներին առնչվող աշխարհի տարբեր երկրների արդիական հետազոտությունները, մասնագիտական բառարանները, բուհական դասագրքերը (Ավետիսյան Յու. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2019, Սուքիասյան Ա. Մ. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2017, Տիտյան Ս., Հայերենի տերմինագիտության հարցեր, Երևան, 2016, Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Երևան, 2021, Խաչատրյան Լ. Մ., Միրումյան Մ. Վ., Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան, Երևան, 2020, Գալստյան Ա., Լեզվաբանական տերմինների ուսումնասիրության մի քանի հարցեր, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2011, Ա. Արզումանյան, ԳՈՒՄ ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները, «Կրթությունը 21-րդ դարում», թիվ 2(2), Երևան, 2020, Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Հայաստան, 2020, Սարուխանյան Ս. և այլք, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, Միքայելյան Կ. Ռ., Եզրույթների դասակարգումն ըստ խոսքիմասային պատկանելության, Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն, Երևան, 2022, Տերմինային բառապաշարի բուհական ուսուցման հիմնախնդրի շուրջ, «Կրթությունը 21-րդ դարում», Թիվ 2(8), Երևան, 2022, Գրաբարը ժամանակակից արևելահայերենի եզրութային բառաշերտի աղբյուր, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», հատուկ թողարկում №2, Երևան, 2024: Allington R., Cunningham P., Classrooms that work, Boston, 2004, Jack C., Richards W., Renandya A. Methodology in Language Teaching. An Anthology of Current practice. Cambridge, New York: Cambridge University Press, 2006, Балаев А.А. Активные методы обучения. М., 2006 և այլն):

Հետազոտության նպատակը: Սույն ուսումնասիրության նպատակը այն դրույթը հիմնավորելն է, որ բուհական արդյունավետ ուսուցումը կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են ժամանակակից որոշակի նոր մեթոդներ, հնարներ և ձևեր:

Հետազոտության նորույթը: Տվյալ հետազոտության **նորույթը** պայմանավորված է նրանով, որ հիմնավորվել և առաջարկվել է ըստ մասնագիտացումների եզրութային բառապաշարի բուհական ուսուցումը հայերենի դասաժամերին առավել արդյունավետ և նպատակային դարձնելու համար առաջնորդվել նաև մեր կողմից առաջարկվող նոր մոտեցմամբ՝ եզրութային բառաշերտի ուսու-

ցումն իրականացնելով ըստ ԳՈԻՍ ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման. այն է՝ մասնագիտական եզրույթների բառակազմական, ծագումնաբանական, ստուգաբանական և իմաստաբանական զուգընթաց քննությամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Սույն հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունն այն է, որ ուսուցողական նպատակից բացի, կարող է օգտակար լինել եզրութաբանական, որևէ եզրութահամակարգի հետագա ուսումնասիրությունների համար:

Եզրութաբանության ուսուցման մեթոդները բուհական համակարգում ընդգրկում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական բաղադրիչներ՝ ներառելով ավանդական ձևեր՝ դասախոսություններ, սեմինարներ, գործնական պարամունքներ, տեխնոլոգիաների կիրառություն, խմբային աշխատանքներ և գիտահետազոտական գործունեություն: Ուսուցման նոր ու նորագույն մեթոդները նպաստում են ուսանողների համապարփակ գիտելիքների և հմտությունների ձևավորմանը՝ պատրաստելով նրանց հաջողության հասնելու եզրութաբանական աշխատանքների և հետազոտության ոլորտներում:

Հիմնական նյութի շարադրանքը

Բուհական կրթության՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» կրթական ծրագրով դասընթացում «Եզրութաբանություն» թեմայի ուսուցումը հատկապես նպաստում է ուսանողների կողմից գիտական խոսքի մշակույթին տիրապետելուն: Սույն հոդվածում հումանիտար, բնագիտական և տեխնիկական մասնագիտացմամբ ուսանողների կողմից իրենց ոլորտի եզրութային բառապաշարի ծագումնաբանական, իմաստաբանական-տիպաբանական ընդհանրություններն ու յուրահատկությունները յուրացնելը հատկապես կարևորում ենք:

Բուհական համակարգում եզրութաբանության ուսուցման մի քանի եղանակներ են կիրառվում, որոնք նպատակ ունեն այս կարևոր ոլորտում ապահովելու ուսանողների խորքային գիտելիքները և կիրառական հմտությունները: Այդ հիմնական եղանակներից են դասախոսությունները, սեմինարները և գործնական պարամունքները: Դասախոսությունների ժամանակ ներկայացվում են եզրութաբանության տեսական հիմքերը, առաջացման պատմությունը, զարգացման ուղիները, ինչպես նաև եզրույթների միօրինականացման և համակարգման գործընթացները, ինչը նպաստում է ուսանողների նոր գիտելիքի ձեռքբերմանն ու իմաստավորմանը, կիրառման նոր հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, ամրակայմանը, մտածողության զարգացմանը: Սեմինարները ավելի ինտերակտիվ են. ուսանողները մասնակցում են քննարկումների, վերլուծում եզրութաբանական տարբեր հարցեր, ներկայացնում և քննարկում են իրենց նախագծերը: Գործնական աշխատանքների դասաժամերին նախ կատարվում են վարժություններ, ապա տրվում են առաջադրանքներ: Օգտվելով եզրութային բառարաններից, տվյալների բազաներից՝ ուսումնասիրում են մասնագիտական եզրույթների կառուցվածքը, կազմության սկզբունքները, կիրառության հնարավորությունները: Իրականացվում են խմբային նախագծեր: Ուսումնասիրելով և վերլուծելով որոշակի եզրութաբանական համա-

կարգեր՝ մշակվում են առաջարկներ եզրույթների բարելավման կամ հայերեն համարժեքների ստեղծման համար: Մասնագիտական դասաժամերին փորձում են ապահովել նաև համագործակցությունը ոլորտի մասնագետների հետ:

Բանասիրական ֆակուլտետի ուսանողներին հանձնարարվում են գիտահետազոտական աշխատանքներ: Կատարվում են ավարտական և մագիստրոսական թեզեր: Ուսանողները կատարում են անկախ հետազոտություններ եզրութաբանության տարբեր հարցերի շուրջ, վերլուծում են տվյալների բազաներ, առաջարկում նոր մոտեցումներ և լուծումներ: Ասպիրանտները սովորում են գրել և հրապարակել գիտական հոդվածներ եզրութաբանության արդի խնդիրների շուրջ, ինչը նպաստում է հետազոտական հմտությունների զարգացմանը: Կարևորում ենք միջազգային ծրագրերին, սեմինարներին և գիտաժողովներին մասնակցությունը, ինչը թույլ է տալիս ծանոթանալ այլ լեզուների տերմինաբանական համակարգերին և փոխանակել փորձը: Հաճախ եզրութաբանության ուսուցումը ներառում է նաև օտար լեզուների ուսումնասիրություն, ինչը թույլ է տալիս ուսանողներին վերլուծել և համեմատել տարբեր լեզուների եզրութային համակարգերը:

Այսուհանդերձ, ներքոշարադրյալ հետազոտության արդյունքում առաջարկվում է եզրութային բառապաշարի քննության նոր մոտեցում, այն է՝ արդի հայերենի եզրութային բառապաշարն ուսուցանել ծագումնաբանական, ստուգաբանական և իմաստաբանական զուգընթաց քննությամբ՝ ըստ ԳՈՒՍ ուսուցման մեթոդի:

Ըստ ակադ. Գ. Զահուկյանի՝ դեռևս հնդեվրոպական նախալեզվում «սկսել էին...սաղմնավորվել այնպիսի բնագավառների տերմինաբանական համակարգեր, ինչպիսիք են երկրագործությունը, անասնապահությունը և ձկնորսությունը, հաղորդակցման միջոցներն ու նավագնացությունը, արվեստը և արհեստագործությունը, քաղաքական հարաբերությունները, ռազմական գործը և հավատալիքները և այլն» [10, էջ 50]: Բնականաբար, հնդեվրոպական նախալեզվից դրանց մի մասը անցել է վաղնջահայերենին, այնուհետև գրաբարյան բառաշերտ, որը հարստացել է նաև նորակազմություններով, հնագույն փոխառություններով:

Արդի հայերենը հնդեվրոպական նախալեզվից գրաբարի միջոցով ժառանգել է մաթեմատիկական, երկրաչափական, բժշկագիտական, դիվանագիտական, փիլիսոփայական, լեզվաբանական, գրականագիտական, բուսաբանական, կենդանաբանական և այլ բնագավառների որոշակի չափով եզրութային բառաշերտ [9, էջ 160-165]: Ուստի արդի արևելահայերենի եզրութային բառաշերտի համար հիմնական աղբյուրներից մեկը այսօր էլ մնում է գրաբարյան բառապաշարը, որը, ըստ բնագրային աղբյուրների, ամրագրված է մասնավորապես գրաբարի բառարաններում: Դրանցում, բացի լեզվական իմաստներից, հաճախ վկայված են նաև տվյալ բառային միավորների եզրութային նշանակությունները՝ լեզուաբ., աստղգ., կրօն., եկեղց., կենդր., բսբ., կզմխս., ճարտ. ևն նշումներով, նաև փոխառության աղբյուրները՝ եբր., յուն., ասոր., վրաց., պիլ.,

պրսկ. նն: Գիտության սրընթաց զարգացմամբ պայմանավորված՝ բացի գրաբարյան բառապաշարից՝ արդի հայերենի եզրութային համակարգերը համալրվում են նաև նոր և նորագույն փոխառություններով:

Արդի արևելահայերենի եզրութային բառապաշարի ծագման, իմաստափոխության հետևանքով եզրութային համակարգում դրանց ամրագրվելու գործընթացն ուսումնասիրելու համար առաջնորդվել ենք գրաբարի, արդի հայերենի բացատրական, եզրութային բառարանների զուգադրական քննությամբ:

Հոդվածում քննել ենք գրաբարյան համագործածական որոշակի բառաշերտի՝ իմաստափոխության հետևանքով արդի արևելահայերենի եզրութային բառապաշար ներթափանցման երևույթը, ինչն էլ նպաստել է գրաբարյան համագործածական բառերի **եզրութացմանը** ժամանակակից արևելահայերենում: Այս միջոցով գրաբարյան համագործածական բառը ձեռք է բերում նոր, մասնագիտական իմաստ, ներմուծվում համապատասխան եզրութային համակարգ: Սրա առավելությունն այն է, որ արդի բառապաշարը չի համալրվում նոր անհարկի եզրությոներով: Այսպես՝ գրաբարում՝

եկամուտ – 1. Դրսից եկած մարդ, օտարական, նորեկ, նորահաւատ:
2. Դրսից մուծուած, օտարամուտ, նորամուտ, ձեռք բերովի, ոչ բնական, խորք:

Եկամտել – Գալ մտնել, աւելանալ, աճել [7, էջ 388]:

Արդի հայերենում՝

եկամուտ – 1. Որևէ տնտեսական ձեռնարկությունից՝ գործունեությունից ստացվող նյութական արժեքների ամբողջությունը, հասույթ: *Պետական՝ ազգային ե.:* 2. Օգուտ, շահ: 3. ած. Դրսից մուծված, օտարամուտ, օտար, խորք:

Բարդվել, ածանցվել է՝ եկամտահարկ, եկամտային, եկամտաշատ, եկամտավոր [1, էջ 321]:

Եզրութաբանական բառարանում՝

եկամուտ – Ընկերությունների ակտիվների ավելացում կամ պարտավորությունների նվազում, որ ձեռնարկության սովորական տնտեսական գործունեության արդյունք է և հանգեցնում է սեփական կապիտալի մեծացման: Եկամտի մեջ ներառվում են հասույթը արտադրանքի իրացումից կամ ցուցաբերած ծառայություններից. շահաբաժինները. ռոյալտին. ռենտան: Միջնորդական գործառնությունների դեպքում եկամուտ է հանդիսանում կոմիսիոն վճարումների գումարը:

Եզրութային բառակապակցություններ՝ եկամտաբերության ցուցանիշ, եկամտահարկ բացասական, եկամտի անհատական բաշխում, եկամտի արդյունք, եկամտի հետ չկապված վճարումներ, եկամտի շրջապտույտ, եկամտի ֆունկցիոնալ բաշխում, եկամուտ անձնական, եկամուտ բրուտոտ, եկամուտ ժամանակավոր, եկամուտ հարկերը վճարելուց հետո, եկամուտների անհավասարություն, եկամուտների բացասական կոր, եկամուտների դրական կոր, եկամուտների հետ չկապված սպառման և խնայողությունների գործոններ, եկամուտների մակարդակի պաշտպանության համակարգ, եկամուտներ իրական, եկամուտների և արդյունքների շրջապտույտ, եկամուտներ (մուտքեր),

եկամուտներ / վնասներ արտակարգ, եկամուտներ / վնասներ բազիսային, եկամուտներ / վնասներ կուրսային, եկամուտ տոկոսի տեսքով [5, էջ 139-141]:

Ակնհայտ է, որ գրաբարյան իմաստն արդի հայերենում գրեթե մարել է: Բացատրական բառարանն արդեն արձանագրել է եզրութային նշանակությունը, թեև եզրութային արժեքի նշումը բացակայում է: Արձանագրված է բառի եզրութացումը: Մասնագիտական բառարանը տվել է եզրութային նշանակությունը, բառակապակցական տարբերակները:

Մեկ այլ պարագայում գրաբարյան եզրությունների մի մասը արդի հայերենի բառապաշարից դուրս են մնացել կամ դարձել են հնաբանություններ՝ պատմաբառեր, և կամ դրանց իմաստներից մեկը մնում է գործունե եզրությ: Այսպես՝

բդեշխ, բդեշխ (պհլ.) – 1. Մեծ իշխան, կուսակալ, կողմնապետ, կողմնակալ: 2. **Հիւպատոս**:

Փոխանակ բդեշխի – Հիւպատոսի փոխանորդ կամ տեղակալ, **փոխհիւպատոս**:

Բդեշխութիւն – Բդեշխի աստիճանը՝ իշխանութիւնը, կուսակալութիւն, կողմնակալութիւն, հիւպատոսութիւն [7, էջ 281]: : Սակայն գրաբարում կիրառվել է նաև՝

Հիւպատոս (յուն.) – Հին Հռոմում՝ բարձրագոյն ընտրովի պետական պաշտօնեայ, փոխարքայ, կուսակալ:

Հիւպատոսական – Հիւպատոսին յատուկ՝ վերաբերող, հիւպատոսի:

Հիւպատոսութիւն, հիւպատոսիւն – 1. Հիւպատոսի աստիճանը՝ իշխանութիւնը: 2. Հիւպատոսութեան ժամանակաշրջանը [8, էջ 74]:

Արդի հայերենում գրաբարյան բառապաշարի մի զգալի մասն էլ իմաստի ընդլայնման շնորհիվ եզրութային նոր նշանակություն է ձեռք բերել: Այսպես՝

Համար (պհլ.) – 1. **Թիւ, գումար, քանակ**: 2. **Թուարկում, հաշում, հաշուելը, հաշիւ**: 3. Հաշուետւթիւն, հաշիւների քննութիւն, պատասխանատւութիւն: 4. Ինչ որ հաշուի պէտք է առնել, բանի տեղ դնելը, համարում, յարգ, վարկ, արժեք: 5. Համեմատութիւն, կարգ, դաս [8, էջ 24]:

Արդի հայերենում՝

1. **Թիվ կամ թվանշան, որը ցույց է տալիս առարկայի հաջորդական կարգը նմանների շարքում**: 2. Առարկայի՝ հագուստի ևն չափսը, որ արտահայտվում է թվով: 3. Պարբերական հրատարակության առանձին հատոր, պրակ կամ թերթ, որ կրում է հերթականություն ցույց տվող թվանշան: 4. Հյուրանոցի առանձին սենյակ կամ բնակարան: 5. Բաղնիքի առանձին լողասենյակ: 6. Համերգի՝ ներկայացման ևն առանձին կատարվող մաս: 7. Նույնն է՝ Համարանիշ: 8. **(ռազմ.)** Հրետանային՝ զնդացրորդային ևն անձնակազմի զինվոր: 9. **(խսկց.)** Անսպասելի՝ տարօրինակ արարք՝ արտահայտություն՝ վարմունք: 10. **(հնց.)** Թիվ: 11. **(հնց.)** Համրանք: 12. **(հնց.)** Հաշիվ, պատասխան, հաշվետվություն [1, էջ 805]:

Գրաբարում՝

թիւ – 1. Քանակ արտայայտող հասկացութիւն, որի օգնութեամբ հաշուումներ են կատարում: 2. Հաշիւ, համրանք: 3. Թուանշան: 4. յոգն. Թուարբանութիւն:

5. Գրքի գլուխ: 6. (լեզուար.) Քերականական կարգ, որն արտայայտում է առարկայի եզակիություն կամ յոգնակիություն [7, էջ 489]:

Արդի հայերենում՝

թիվ – 1. Քանակ արտահայտող հասկացություն, որի օգնությամբ հաշվումներ են կատարում: 2. Հաշիվ, համբանք.... 3. Քանակություն, քանակ: 4. Տարերիվ, թվական: 5. Թվանշան, թվի գրային նշան: 6. Ամսաթիվ: 7. (արևմտ.) Հաջորդական կարգ, համար.... 8. Շարք, խումբ, որոշ կարգ կազմող մարդկանց կամ առարկաների դաս.... 9. Որևէ թվականի ծնունդը կազմող երիտասարդությունը որպես հերթական գորակոչի հասակ: 10. (լեզվբ.) Քերականական կարգ, որը ձևաբանական միջոցներով արտահայտում է առարկայի եզակիություն կամ հոգնակիություն: 11. (**եկեղ.**) Միայն արտասանվող, չերգվող [1, էջ 444]:

Եզրութային բառակապակցություններում՝ ամբողջ / բնական / պարզ / բաղադրյալ / բացասական / ոչ բացասական ամբողջ / ռացիոնալ / իռացիոնալ / իրական թվեր. թվային մեծություն / արժեք / առանցք. թվերի գումար. թվի բացարձակ արժեք՝ մոդուլ. թվերի տեսություն / գումար / արտադրյալ / հարաբերություն / տարբերություն են:

Նկատելի է, որ մաթեմատիկական, լեզվաբանական եզրութային իմաստներին ավելացել է նաև եկեղեցականը:

Այլ օրինակներ՝

գումար – Խումբ, խմբուելը, մի տեղ հաւաքուելը, հաւաքուած բազմութիւն [7, էջ 340]:

Արդի հայերենում՝

գումար – 1. (**թվաբ.**) Երկու կամ ավելի թվերի գումարումից ստացված քանակը: 2. Որևէ բանի ընդհանուր քանակությունը: 3. Դրամի որոշ քանակությունը: 4. ած. (հզվդ.) Ամբողջ, հանուր [1, էջ 267]:

Բարդված, ածանցված օրինակները՝ գումարահատկացում, գումարագիր, գումարային, գումարատեր են: Եզրութային բառակապակցություններում՝ հանրահաշվական / ընդհանուր / վեկտորական գումար. եռանկյան կողմերի / եռանկյան անկյունների / ուռուցիկ քառանկյան անկյունների գումար են:

Գումարել – 1. Հաւաքել, ժողովել, խմբել, կուտակել: 2. Համախմբել մէկի դէմ, զօրք հաւաքելով կռուի պատրաստուել: 3. Հաւաքուած զօրքի հրամանատարութիւնը մէկին յանձնել, զօրքի հրամանատար կամ գաւառի կառավարիչ նշանակել: 4. Հաշուել (ժամանակը, տարիները): 5. Հաւաքուել: 6. Կռուի պատրաստուել: 7. Կռուի գնալ մէկի դէմ: 8. Կռուել, բախուել, ընդդիմանալ [7, էջ 340]:

Արդի հայերենում՝

Գումարել – 1. Հավաքել, ժողովել, համախմբել: 2. Ի մի բերել, ամբողջացնել, միացնել իրար: 3. Հրավիրել, կայացնել: *Ժողով գ.:* 4. (**մաթ.**) Մեկ կամ մի քանի թիվ միասին ավելացնել, գումարում կատարել: 5. փխր. Ավելացնել, հավելել, մեծացնել: *Եվ դարձյալ քիչ կլինի, եթե սրան գումարենք այդ մի փշուր տեղեկությունը (Վ. Խեչումյան):* Նաև՝ ի մի գումարել, գումարելի, գումարկել, գումարվել, գումարում են [1, էջ 267]:

Այլ օրինակներ՝

Արմատ - 1. Բույսի այն մասը, որն ամրանում է հողում՝ ստանալով հանքային նիւթեր և ջուր: 2. փխբ. Նախահայր, սերունդների՝ ցեղի՝ տոհմի սկիզբը: 3. փխբ. Սկզբնապատճառ, առիթ: 4. Որևէ բանի ստորին մասը՝ ծայրը, հիմք, խորք, հետք [7, էջ 217]:

Արդի հայերենում՝

1. Բույսի՝ հողի մեջ նստած մասը, որով նա ամրանում է գետնի մեջ և ստանում հանքային լուծույթներ պարունակող ջուր: 2. Բույսի այդ մասը որպէս փայտ կամ հումք: 3. Որոշ կարգերի բույսերի՝ հողում գտնվող ուտելի մասը՝ կոճղեզր՝ պալարը մանր արմատաթելերով հանդերձ: 4. (կզմխս.) Ատամների, մազերի, եղունգների ևն մարմնի մաշկի մեջ գտնվող մասը: 5. (կզմխս.) Որևէ գործարանի հիմքի՝ ուրիշ գործարաններին միանալու տեղը՝ կոթ: 6. (փխբ.) Նախահայր, տոհմի, ցեղի, ընտանիքի սկիզբը: 7. (փխբ.) Հիմք, սկիզբ, պատճառ: 8. (լեզվբ.) Բառի հիմնական ձևույթը: 9. (մաթ.) Ինքն իր վրա բազմապատկվելով աստիճան տվող թիվը: 10. (մաթ.) Արմատի գրային նշանը, արմատանշանով [1, էջ 136]:

Եզրութային բարդություններում, բառակապակցություններում՝ արմատակրկնություն, արմատահնչյուն. անվանական / բայական / ստուգաբանական / փոխառյալ / բնիկ հայերեն / ձայնադարձով / կախյալ արմատ. արմատական բառ / բառարան / լեզուներ / հիմք / ձևույթ / մակբայ ևն (լեզվ.). արմատ հանել, քառակուսի արմատ, ենթաարմատային արտահայտություն, արմատի ցուցիչ, թվաբանական արմատ ևն (մաթ.):

Մեկ այլ օրինակ՝

Աստիճան - 1. Սանդուղքի ամեն մի ոտքը, սանդղարմատ: 2. Սանդուղք: 3. Բեմ: 4. Որևէ բանի զարգացման՝ ընթացքի իւրաքանչիւր մասը՝ փուլը, վիճակ: 5. Տան յարկ, դստիկոն: 6. Առաջադիմութիւն: 7. Բարձրութիւն, բարձր դիրք՝ աստիճան: 8. Եկեղեցական կարգ [7, էջ 188]:

Արդի հայերենում, ըստ Է. Աղայանի, բառն ունի 17 իմաստ՝

1. Սանդուղքի ամեն մի ոտքը, սանդղարմատ: 2. հոգն. Սանդուղք: 3. Բարձրություն, բարձր դիրք աշխատանքում, հասարակական կյանքում: 4. Ջարգացման, շարժման, շարունակաբար կատարվող, տեղի ունեցող պրոցեսի յուրաքանչյուր մասը, փուլը, էտապը: 5. Որևէ բանի հաջորդական կարգերից յուրաքանչյուրը: Օր.՝ առաջին աստիճանի կրթանշան: 6. Որևէ բան բնութագրող համեմատական մեծությունը, մակարդակը, որևէ բանի չափը. Օր.՝ զարգացման աստիճան: 7. Նույնն է՝ Գիտական աստիճան: 8. (երկրչ.) Անկյան կամ աղեղի չափման միավոր = շրջանի 1/360-ին: 9. Ջերմության չափման միավոր: 10. Ջերմաչափի, ծանրաչափի ամեն մի բաժանմունքը: 11. Հեղուկի խտության, սպիրտի թնդության չափման միավոր: 12. (մաթ.) Միևնույն արտադրիչների արտադրյալ: 13. Տե՛ս Համեմատության աստիճաններ: 14. (հնց.) Ազգակցական մերձավորության չափը, պորտ: 15. (երաժշտ.) Հիմնական ձայնի համեմատությամբ

ձայնի բարձրադման կամ իջեցման չափը: 16. (հնգ.) Պաշտոնի հերթական կարգը: 17. (կպբռ.) Չափ [1, էջ 113]:

Դիտարկել ենք նաև գրաբարյան բառապաշարում ամրագրված եզրութային բառաշերտ, որը հետագայում դուրս է մղվել գործուն բառապաշարից տեղը զիջելով փոխառյալ, մեր կարծիքով, անհարկի համարժեքին: Այսպես՝

Թանչ, թանչք -Dysenterya – Խիթք աղեսգ. որովայնալուծուի ծիրիչ արեամբ չափ. ախտ ընդերաց և երաստանի: *Թանչ, ի փորին ցաւ [4, ց. 1, էջ 797]: Ըստ Հ. Աճառյանի՝ թանչ - «փորհարութիւն, փորհարինք»: Բնիկ հայ բառ՝ հնիւ. t ā-n «հալիլ, լուծուիլ» արմատից՝ չ մասնիկով [3, էջ 150, 153]: Դիզենտերիա [*< дизентерия >* հուն. dysenterya< dys խանգարում + entron աղիք], (բժշկ.): Թանչ – սուր վարակիչ հիվանդություն. արտահայտվում է արյունալուծությամբ [6, էջ 151]: Արդի հայերենում մնացել է միայն բառարանային արձանագրությամբ տեղը զիջելով անհարկի փոխառությանը: Բժշկագիտական բառապաշարից լիովին դուրս է մղվել:

Կարևորելով եզրութային բառաշերտի բուհական ուսուցման խնդիրը՝ նպատակահարմար ենք համարում համադրել ուսուցման ավանդական ու ժամանակակից գործուն մեթոդները, որոնք մեծապես նպաստում են նոր և խորը գիտելիքների ձեռքբերմանն ու իմաստավորմանը, հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, ամրակայմանը, մասնավորապես քննադատական մտածողության զարգացմանը: Բուհական բոլոր մասնագիտությունների գծով եզրութային բառաշերտի հիմնական մասը ծանոթ է ուսանողներին դեռևս դպրոցից, ուստի մեթոդական գործուն և արդյունավետ հնար է ԳՈՒՄ-ը (**գիտեմ՝ դպրոցական ծրագրի շրջանակում մասնագիտական եզրութների իմացությունը, ուզում եմ իմանալ՝** եզրութային նորակազմությունները ու իմաստային նորաբանությունները, **սովորեցի՝** սովյալ եզրութների բառակազմական, ստուգաբանական, իմաստաբանական քննությունը): Այս առումով բուհական ուսուցման խնդիրն է իրականացնել եզրութների ծագումնաբանական՝ ստուգաբանական, իմաստաբանական՝ իմաստափոխական, բառակազմական գուրնթաց քննությունը:

Կառուցողական ուսուցման մեթոդի բաղադրիչներից մեկն է ԳՈՒՄ-ը, որը հայտնի է երեք սյունակներից կազմված աղյուսակով: Այն ստեղծվել է Դոննա Օլգի կողմից 1986 թ.: «ԳՈՒՄ ռազմավարությունը ներառում է երեք հիմնական հասկացություններ՝ իմանալ, ցանկանալ և սովորել... լավ սովորողները իրենց նախկին գիտելիքները կապում են նոր տեղեկատվությանը, վերակազմակերպում այն և ստեղծում իրենցը... Բացի այդ՝ ռազմավարությունը նախատեսված է օգտագործվելու դասավանդողի և միասին աշխատող ուսանողների խմբի կողմից... Ռազմավարությունն իրականացնելիս դասավանդողը սկզբում անցկացնում է բանավոր քննարկում դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ..., թո՛ւյլ տվեք, որ գործընթացը շարունակվի ուսանողների անհատական գաղափարների և հարցեր գրելու համար անձնական աշխատանքային թերթիկի վրա» [11, էջ 478]:

Գրատախտակին գծվում է այսպիսի աղյուսակ և մտազրոհի միջոցով խնդրում ենք ուսանողներին լրացնել այն:

ԳՈՒՍ ռազմավարության աղյուսակ 1

Գ – ԻՆՉ ԳԻՏԵՄ	ՈՒ – ԻՆՉ ԵՄ ՈՒԶՈՒՄ ԻՄԱՆԱԼ	Ս – ԻՆՉ ՍՈՎՈՐԵՑԻ ԵՎ ԴԵՌ ԿՍՈՎՈՐԵՄ

Աղյուսակ 1-ը լրացնելուց հետո առաջարկվում է լրացնել Աղյուսակ 2-ը:

ԳՈՒՍ ռազմավարության իրականացման Աղյուսակ 2

Դասախոսի գործունեությունը	Ուսանողի գործունեությունը
• Ի՞նչ է եզրույթը: Թվել եզրույթի և բառի նմանություններն ու տարբերությունները: • Գրել նոր սովորած եզրույթներ: • Գրել եզրույթների արևմտահայերեն համարժեքները: • Կազմել եզրույթային ենթահամակարգեր՝ ըստ մասնագիտական ոլորտների, բաժինների: • Գրել եզրույթների տարբերակային ձևերը, նույնանիշներն ու հականիշները: • Դրանք ենթարկել բառակազմական վերլուծության՝ ըստ կաղապարների: • Կատարել եզրույթների ստուգաբանական քննություն՝ օգտվելով համապատասխան բառարաններից: • Կատարել եզրույթների իմաստաբանական քննություն՝ ըստ համապատասխան բառարանների: • Կառուցել Վենի դիագրամ՝ մատնանշելով ընդհանրական եզրույթները: • Դասակարգել եզրույթները՝ ըստ հնաբանությունների ու նորաբանությունների:	

Շղթան բաց է. առաջադրանքները կարող են փոփոխվել, խորացվել:

«Մեթոդի առավելություններն են՝

ա. ուսուցչին թույլ է տալիս պատկերացում կազմել աշակերտների՝ տվյալ թեմայի վերաբերյալ ունեցած նախնական գիտելիքների մասին,

բ. աշակերտների համար որոշակի համակարգ է ապահովվում, որի շրջանակներում նրանք կարողանում են կարդացվելիք նյութի մասին ենթադրություններ անել,

գ. զարգանում են ինքնուրույնության, ինքնահարցման, ինքնավերլուծության հմտությունները. նրանք սովորում են ակտիվորեն կարդալ, լարել, սրել

ուշադրությունը՝ թեմային վերաբերող հարցերի պատասխանները գտնելու համար,

դ. աշակերտներին ուղղություն է տրվում, թե ինչպես նպատակային կերպով դասակարգեն արդեն ունեցած և նոր տեղեկատվությունը,

ե. ի հայտ են գալիս թեմայի վերաբերյալ սխալ պատկերացումները, թերմբոնումները, որոնք շտկվում են մեթոդի գործադրման ընթացքում» [2, էջ 550]:

Կատարված քննությամբ մենք հանգել ենք այն **եզրակացության**, որ ԳՈՒՄ-ի կիրառման առանձնահատկությունն այս պարագայում այն է, որ **գիտեմ** բաղադրիչը ապահովված է դպրոցական ուսուցմամբ, իսկ **ուզում եմ իմանալ, սովորեցի** բաղադրիչները լրացնում է բուհական ուսուցման համակարգը:

Այսպիսով՝ 1. ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությամբ և դրանց ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված մասնագիտական բառաշերտի քննության և արդյունավետ ուսուցման գործընթացի կազմակերպումը. ԳՈՒՄ-ը այս պարագայում արդյունավետ է: 2. Հնդեվրոպական նախալեզվում սաղմնավորված եզրութային բառապաշարը ներքին փոխառության ճանապարհով անցել է գրաբարյան բառաշերտ, որը հարստացել է նորաստեղծ եզրութներով, համալրվել հայերենին հատուկ բառաձանցման, բառաբարդման օրինաչափություններով, նաև արտաքին հնագույն փոխառություններով: 3. Գրաբարյան բառապաշարի մի մասը վերաիմաստավորմամբ, եզրութացման միջոցով ձևավորել է արդի հայերենի եզրութային համակարգի միջուկը: 4. Գիտության զարգացմանը զուգընթաց՝ նոր ու նորագույն եզրութների արտաքին փոխառությունները ևս համալրում են հայերենի բառապաշարը:

TEACHING TERMINAL VOCABULARY OF MODERN EASTERN ARMENIAN DUE TO THE APPLICATION OF MODERN METHOD GUS

Miqayelyan Karine

*Ph.D. of Philology, Associate Professor,
Yerevan State University,
Republic of Armenia
karinemiqayelyan1963@gmail.com*

Summary

The present article aims at substantiating the thesis that the vocabulary of Grabar is one of the main sources for almost all the terminological vocabulary layers. There is no doubt that over the centuries some words have penetrated into the early Armenian language from the Indo-European vocabulary through internal borrowings, which have later passed into the Grabar vocabulary. Thanks to the ancient borrowings, the vocabulary of Grabar terms was enriched and switched to the Middle Armenian language, and as a result of changing phrases, some of them were translated into Eastern Armenian. Therefore, the novelty of this study is due to the fact that it is justified and proposed in order to make the university study of terminological vocabulary by specialization more effective and purposeful at the Armenian language classes, also to be guided by a new approach proposed by us, that is, to conduct the study of the terminological vocabulary in accordance with an up-to-date GUS method, which supposes a study parallel with their word formulating, genealogical, etymological and semantic research.

The relevance of the article is due to the expedient development of effective methods for studying terminological vocabulary in the field of higher education and the need of seeking new ways to submit them.

As a result of the investigation, we came to the conclusion that the terminological vocabulary originated in the Indo-European proto-language passed into the Grabar vocabulary through internal borrowing, which was enriched with newly created terms, supplemented with lexical turns specific to the Armenian language, patterns of word complexity, as well as ancient external borrowings. A certain part of the vocabulary of Grabar formed the core of the terminological system of the modern Armenian language through reinterpretation and generalization. With the development of science, new and newest terminological borrowings also replenish the terminological dictionary of the modern Eastern Armenian language. The peculiarity of applying the GUS method in this very case is that the component “**know**” is provided by school education, and the component “**I want to know, I have learnt**” is replenished by the higher educational system.

The teaching methods of terminology in the field of higher education system include both theoretical and practical components, including lectures, seminars, practical classes, application of different technologies, group work and scientific research activity. Teaching methods contribute to the development of students' comprehensive knowledge and skills, enhancing their success in the fields of terminological studies and research work.

Keywords: *study of terms, teaching method GUS (KWL table or KWL chart), Grabar's vocabulary, terminological dictionary of the modern Eastern Armenian language, change of meaning, termination, neologisms of terms.*

ИЗУЧЕНИЕ ТЕРМИНОЛОГИЧЕСКОГО СЛОВАРЯ СОВРЕМЕННОГО ВОСТОЧНОАРМЯНСКОГО ЯЗЫКА В РАМКАХ ИССЛЕДОВАНИЯ ГУС

Микаелян Карине

*Кандидат филологических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
karinemiqayelyan1963@gmail.com*

Аннотация

Цель этой статьи – обосновать положение о том, что словарный запас грабара является одним из основных источников для терминологического слоя почти всех современных научных дисциплин восточноармянского языка. Конечно, на протяжении веков путем внутреннего заимствования часть их перешла из индоевропейской лексики в раннеармянский язык, а затем в лексику грабара. Благодаря древним заимствованиям, термины из лексического фонда грабара обогатились, перешли в среднеармянский язык, а в результате изменений часть их была переведена и на восточноармянский язык. Следовательно, новизна данного исследования обусловлена внедрением предложенного нами нового метода – проводить изучение терминологического словарного запаса параллельно с генеалогическим, этимологическим и семантическим его исследованием для того, чтобы сделать вузовское изучение терминологической лексики по специальности на уроках армянского языка более эффективным и целенаправленным.

При этом преподавание предлагается осуществлять с помощью применения современного метода обучения – ГУС (ЗХУ – знаю, хочу знать, умею).

Актуальность статьи обусловлена целесообразностью разработки эффективных методов изучения терминологической лексики по специальности в сфере вузовского образования, необходимостью поиска новых путей подачи учебного материала.

В результате проведенного исследования мы пришли к выводу, что зародившийся в индоевропейском праязыке терминологический словарный запас перешел в словарь грабара путем внутреннего заимствования. Он обогатился вновь созданными терминами, попол-

нился специфическими для армянского языка лексическими оборотами, образцами моделями сложных слов, а также древними внешними заимствованиями. Часть словаря грабара путем переосмысления и обобщения сформировала ядро терминологической системы современного армянского языка. По мере развития науки новые и новейшие терминологические заимствования также пополняют терминологический словарь современного восточноармянского языка. Особенность применения метода ГУС (ЗХУ) в данном случае заключается в том, что компонент «знаю» обеспечен школьным обучением, а компоненты «хочу знать, умею» дополняются системой высшего образования.

Методы обучения терминологии в университетской системе обучения имеют теоретическую и практическую составляющие, включая лекции, семинары, практические занятия, использование технологий, групповую работу и научно-исследовательскую деятельность. Методы обучения способствуют освоению учащимися всесторонних знаний и навыков, готовят их к участию в различных работах и исследованиях по изучению терминологической базы.

Ключевые слова: изучение терминов, метод обучения ГУС (ЗХУ – знаю, хочу знать, умею), словарный запас грабара, терминологический словарь современного восточноармянского языка, смысловые изменения, формирование терминов, терминологические неологизмы.

Օգտագործված գրականության ցանկ

1. Aghayan E. B., Ardi hayereni batsatrakan bararan, hator A, Yerevan, 1976.
2. Aghajanyan Z. Kh., Hayots lezvi usutsman yev khosqi mshakuthyan dzevavorman metodika, Yerevan, 2021.
3. Acharyan Hr., Hayeren armatakan bararan, Yerevan, hator B, 1926.
4. Avetikeyan hayr Gabriel yev aylq, Nor bargirq haykazea lezui, Venetik, 1836.
5. Kirakosyan G. E. yev urishner, Tntesagitakan batsatrakan bararan, Yerevan, 1999.
6. Hayrapetyan A., Otari bareri bararan, Yerevan, 2011.
7. Ghazarean R. S., Grabari bararan, hator A, Yerevan, 2000.
8. Ghazarean R. S., Grabari bararan, hator B, Yerevan, 2000.
9. Petrosyan H. Ts., Terminagituthyan himunqner. dasagirq, Yerevan, 2010.
10. Jahukyan G. B., Hayots lezvi patmuthyun. nakhagrayin zhamanakashrjan, Yerevan, 1987, ej 50.11.
11. Atiqah N. A., Implementing KWL strategy in teaching reading for non-English department students, View metadata, citation and similar papers at cor.ac.uk. The 61st TEFLIN International Conference, UNS Solo 2014, p. 477-480.

Получено: 29.03.2025

Рассмотрено: 01.04.2025

Принято: 11.04.2025

Received: 29.03.2025

Reviewed: 01.04.2025

Accepted: 11.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License